Հաշվետվություն

Անձնական տվյալների պաշտպանության գործակալության փորձագետ
Մկրտիչ Խաչատրյանի
2023թ.-ի նոյեմբերի 6-ից 2024թ.-ի մայիսի 3-ի համար

Ըստ ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ նաեւ՝ Գործակալություն) փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագրի նպատակների՝ հայտնում եմ, որ 2023թ.-ի նոյեմբերի վեցից 2024թ.-ի մայիսի երեքն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ հիմնական աշխատանքները.

- տրամադրվել է մասնագիտական օժանդակություն անձնական տվյալներ մշակող էլեկտրոնային համակարգերը բավարար պաշտպանության մակարդակ ունեցող ճանաչելու վերաբերյալ, այդ թվում՝ անձնական տվյալներ մշակելու համար օգտագործվող սարքերը և փաստաթղթերը, այդ թվում՝ առկա տվյալները և համակարգչային ծրագրերը ստուգելու ընթացքում:

- Անձնական տվյալներ մշակողներին եւ անձնական տվյալների սուբյեկտներին տրամադրվել է անձնական տվյալների մշակման վերաբերյալ խորհրդատվություն (որպես խորհրդատվություն է դիտվում նաև իրականացված ուսուցումը)՝ կապված տեղեկատվական անվտանգության, անձնական տվյալների առցանց պաշտպանության եւ նմանաբնույթ այլ հարցերի վերաբերյալ:
  Իմ կողմից տրամադրված խորհրդատվությունը վերաբերում է հիմնականում հետեւյալ թեմաներին.

  - սոցիալական ցանցերում ինքնության գողության և քաղաքացիների նկարների գողության ու դրանք կայքից հեռացնելու վերաբերյալ
  - Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ,
  - Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի կիրառման վերաբերյալ (առցանց տիրույթում),
  - Համացանցում կեղծ (fake) էջերը հեռացնելու վերաբերյալ,

- Հավելվածների օգտագործման վերաբերյալ,
- Կիբեռանվտանգության եւ համացանցային հիգիենայի վերաբերյալ:

- իրականացվել են ուսումնասիրություններ, մշակել ուղեցույցներ, տեղեկատվական նյութեր, հայտարարություններ, գրություններ, առաջարկություններ, դիտողություններ կամ տրամադրվել եզրակացություններ դրանց վերաբերյալ:

  Մասնավորապես.

  - հրապարակել եմ մի շարք խորհրդատվական նյութեր ու տեսանյութեր Ֆեյսբուք սոցիալական ցանցում տարածված խաբեությունների վերաբերյալ:

  Գործակալության Ֆեյսբուքի էջում հրապարակվել է շուրջ 40 իրազեկող նյութ Գործակալության վարույթների, խորհրդատվությունների վերաբարյալ, ինչպես նաև տվյալների հետ ճիշտ վարվելու կանոնների մասին խորհրդատվական նյութեր, համցանցում տարածված վիրուսներից զերծ մնալու մասին հայտարարություններ:

  Կազմել եմ ուղեցույց՝ «Երեխաների տվյալները համացանցում. հրապարակել առանց վնասելու»:
  Վերը նշված ուղեցույցի հիման վրա կազմել եմ բուկլետ, կատարել ձևավորման աշխատանքները:

  Մասնակցել եմ «Ինչ գիտի համացանցն իմ մասին» համադպրոցական միջոցառման կազմակերպչական աշխատանքներին:

Հարցազրույց «Հանրային հեռուստաընկերությանը»՝ ***Սոցիալական ցանցերը դառնում են կեղծ հայտարարություններով «հարստանալու» հիմնական հարթակ***

Հարցազրույց «Հանրային հեռուստաընկերությանը»՝ ***Առցանց հյուրանոցի համար ամրագրողները պետք է զգույշ լինեն. Ֆիշինգային հարձակումների նոր թիրախը***

Հարցազրույց «Հանրային հեռուստաընկերությանը»՝ ***Անվտանգ համացանց. դեռահասները սովորում են գրագետ օգտվել թվային գործիքներից***

Հարցազրույց «Ժամը» լրատվականին՝ ***Սոցցանցերում երեխաների լուսանկարներ հրապարակելը կարող է վտանգավոր լինել***

Հարցազրույց «Ժամը» լրատվականին՝ ***Կիբերհանցագործների հերթական թիրախը հայտնի Booking.com կայքն է***

- փորձագետը վարել է Գործակալության էջերը սոցիալական ցանցերում

Գործակալությունն ունի էջ facebook սոցիալական հարթակում՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն / Armenian PDPA անվանմամբ հետեւյալ հիպերհղմամբ՝ (https://www.facebook.com/PersonalDataArmenia/):

Սույն հաշվետվությունը ներկայացնելու օրվա դրությամբ.

- Գործակալության էջն ունի 15900 բաժանորդ,

- Հրապարակման լուսաբանումը՝ post reach (այն մարդկանց ունիկալ թիվը, ովքեր տեսել են էջի գրառումները 6 ամսվա ընթացքում կազմել է ավելի քան 140000),

- էջում իրականացվել է ավելի քան 40 բովանդակային հրապարակում (տեղեկատվական նյութ, հայտարարություն եւ այլն),

- էջի միջոցով տրամադրվել է շուրջ 30 գրագրություն (հիմնականում առցանց խորհրդատվություն):

- Գործակալության խումբը Ֆեյսբուքում ունի 400-ից ավելի մասնակիցներ: Խումբն օգտագործվում է իրազեկման ու առցանց ուսուցումներ կազմակերպելու համար:

-հաշվի առնելով քաղաքացիների ներկայացվածությունը Instagram և Telegram հարթակներում Գործակալությունն ունի հաշիվներ նաև այս սոցիալական ցանցերում:

- Գործակալության բաժիններին վարույթների իրականացման կամ մոնիթորինգների անցկացման ընթացքում եւ բաժինների

իրավասությունների ոլորտում գտնվող այլ հարցերում տրամադրված փորձագիտական օժանդակությունը ներառում է ինչպես վերոնշյալը, այնպես էլ աշխատանքային կարգով տրամադրվող խորհրդատվությունն այն իրավական ակտերի վերաբերյալ, որոնց մասին Գործակալությունը կարծիք է ներկայացրել:

Անձնական տվյալների պաշտպանության
գործակալության փորձագետ Մկրտիչ Խաչատրյան

03.05.2024թ.